Funded by the European Union

Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման



Իրականացման ժամանակահատված: 30.04.2021 - 31.12.2024

ԱլԳ երկրներ:

Armenia

Նախագծի կայքէջ: m4eg.eu/en/

Նախագծի նկարագրություն

Ծրագրի նպատակն է տարածաշրջանում ընդլայնել տնտեսական ներառական աճը և աշխատատեղերի ստեղծումն՝ աջակցելով տեղական ինքնակառավարման մարմիններին՝ մշակելու և իրականացնելու Տեղական տնտեսական զարգացման ծրագրեր (ՏՏԶԾ) 12 ընտրված համայնքներում: Ծրագրի նպատակն է զարգացնել տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) կարողություններն՝ իրականացնելու նորարարական ծրագրեր, որոնք ուղղված կլինեն՝ ամրացնելու քաղաքների կենսունակությունը և դրանք դարձնել ավելի ժամանակակից: Ծրագրի իրականացման 4 տարիների ընթացքում Արևելյան գործընկերության երկրներում մոտ 350 տեղական ինքնակառավարման մարմիններ կունենան իրենց ձեռքբերումները՝ մասնակցելով վերապատրաստման, կարողությունների զարգացման և գիտելիքների փոխանակման գործողություններին: Ավելի քան 50 ՏԻՄ-եր աջակցություն կստանան՝ մշակելու ՏՏԶԾ-ներ, որոնց հիմքում կլինի Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման մեթոդոլոգիան, և ընտրված 12 ՏԻՄ-երը իրենց ձեռքբերումները կունենան նախագծման, կարողությունների զարգացման և 50-ից ավելի ծրագրերի պորտֆելի գործարկման համար հիմքեր դնելու գործողություններից՝ ուղղված ճգնաժամից հետո կանաչ վերականգնման խնդիրներին, տեղական մակարդակում ներառելով քաղաքային պլանավորում, գենդերային մասնակցություն և նորարարություն:

Ակնկալվող արդյունքներ:

-Ընդլայնված տնտեսական հնարավորություններ Արևելյան գործընկերության տարածաշրջանում՝ ՏՏԶԾ-ների և զարգացման ծրագրերի արդյունքում,
-զարգացման ծրագրերի և ծրագրային փաթեթների պորտֆելի կատարելագործված համապատասխանություն,
-Տեղական ինքնակառավարման մարմիններն արդյունավետ կերպով իրականացնում են ծրագրային փաթեթների պորտֆելի մոտեցումը: